**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N N ՍՊ-ՇՀԾՁԲ-15/9-102-2017**

ք. Երևան <<03>> ճարտ/ի 2017 թ.

<<ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը>>, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի , որը գործում նախարարության կանոնադրության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բնեռային ուղի>> ՍՊԸ ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ամալյա Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1 058 400 (մեկ միլիոն հիսունութ հազար չորս հարյուր ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան դեկտեմբերի 25-ը 2017 թ.

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով':

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | «Բնեռային ոսկի» ՍՊԸ |
| ք. Երևան, Աբովյան 9 | ք. Երևան, Մանաղյան 25 շ, բն 6. |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ Զարգացում մ/ճ. |
| Հ/Հ 900011059186 | հ/հ 1810052083823312 |
| ՀՎՀՀ-02586282 | ՀՎՀՀ 02228306 |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| _______ Վ. Էլոյան | _______ Ա. Հակոբյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
<<03>> [illegible] 20 թ. կնքված
ՍՊ-ՇՀԾՁԲ-15/9 102-20 ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ

**Համակարգչի պահպաման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր**

| Անվանումը | Քանակը |
|---|---|
| Անձնական համակարգչի MB նորոգում | 8 |
| Անձնական համակարգչի MB փոխարինում՝ ներառյալ Ասուս Ինտել 31 չիպսեթ, ՊՍԻ-Էքսպ (ASUS Intel 31 chipset, PCI-Exp) կամ համարժեքը | 3 |
| Նոթբուկ համակարգչի MB նորոգում | 2 |
| Նոթբուկ համակարգչի MB փոխարինում ներառյալ համապատասխան MB | 2 |
| CPU փոխարինում՝ ներառյալ Քորե 2 Դուօ Ե7300 (2.66 ԳՀց), 1066 ՄՀց (Core 2 Duo E7300 (2.66G Hz), 1066 MHz) կամ համարժեքը | 2 |
| Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ1 1024Մ 400ՄՀՑ (DDR1 1024M 400MHZ) կամ համարժեքը | 2 |
| Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ) կամ համարժեքը | 5 |
| Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ3 1024Մ 1333ՄՀՑ (DDR3 1024M 1333MHZ) կամ համարժեքը | 4 |
| Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1333ՄՀՑ (DDR3 2048M 1333MHZ) կամ համարժեքը | 5 |
| Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ3 4ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 4ԳԲ 1333MHZ) կամ համարժեքը | 3 |
| Անձնական համակարգչի SVGA փոխարինում՝ ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 1 Գբ ՊիՍիԱյ-Էքսպ (Nvidia GF GT 1Gb PCI Exp) կամ համարժեքը | 3 |
| Նոթբուկ համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ(DDR2 1024M 667/800MHZ) կամ համարժեքը | 2 |
| Նոթբուկ համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1333ՄՀՑ(DDR3 2048M 1333MHZ) կամ համարժեքը | 2 |
| Անձնական համակարգչի HDD փոխարինում, ներառյալ ՀԴ 500 գբ ՍԱՏԱ, 7200 ռպմ (HDD 500 Gb SATA, 7200 rpm) կամ համարժեքը | 5 |
| Նոթբուկ համակարգչի HDD փոխարինում՝ ներառյալ ՀԴ 500 գբ ՍԱՏԱ, 5400 ռպմ (HDD 500 Gb SATA, 5400 rpm) կամ համարժեք | 2 |
| DVD-RW փոխարինում՝ ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW) կամ համարժեքը | 4 |
| Սնուցման բլոկի փոխարինում՝ ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450 Վտ (Power supply unit for P4 Case 450w) կամ համարժեքը | 15 |

**Մոնիտորի պահպաման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր**

| Անվանումը | Քանակը |
|---|---|
| ԼՍԴ-ի լամպի փոխարինում՝ ներառյալ լամպը 17" | 3 |
| ԼՍԴ-ի լամպի փոխարինում՝ ներառյալ լամպը 19" | 3 |
| ԼՍԴ-ի մոնիտորի լուսավորման համակարգի վերանորոգում՝ ներառյալ համապատասխան պահեստամասեր 17" | 3 |
| ԼՍԴ-ի մոնիտորի լուսավորման համակարգի վերանորոգում՝ ներառյալ համապատասխան պահեստամասեր 19" | 3 |

**Անխափան սնուցող սարքի պահպաման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր**

| Անվանումը | Քանակը |
|---|---|
| Մարտկոցի փոխարինում՝ ներառյալ մարտկոցը 12Վ/17Ա<br>Ռելեների փոխարինում՝ ներառյալ ռելեներ | 15 |

**Սկաների պահպաման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր**

| Անվանումը | Քանակը |
|---|---|

| | |
|---|---|
| Վերանորոգում պահեստամասերով | 3 |
| Լամպի փոխարինում՝ ներառյալ լամպը Ա4 | 3 |
| **Համակարգչային ցանցի պահպաժման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր** | |
| **Անվանումը** | **Քանակը** |
| Սվիչի տեղադրում՝ ներառյալ սվիչ տեղադրում, ներառյալ սվիչ 10/100/1000 16 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 16 PORT) կամ համարժեքը Մալուխի անցկացում՝ ներառյալ մալուխի գինը (գծամետր) | 2 |
| **Լազերային տպիչի պահպաժման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր** | |
| **Անվանումը** | **Քանակը** |
| Լիցքավորում լազերային տպիչների՝ ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1100, 1012, 1015, 1018, 1020, 3015, 3020, 3030, 3050, 3050z, 3052, 355 M1005mfp, Q2612A (Քենոն 303/703) HP 1320, Canon i-sensys LBP6300dn (Քենոն 719) Բրոդեր TN720/TN750 կամ համարժեքը | 20 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում՝ ներառյալ թերմոթաղանթ (HP/Canon կամ համարժեքը) | 5 |
| Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման՝ ներառյալ թմբուկ ՀՊ ԼՋ 1100, 1012, 1015, 1018, 1020, 3015, 3020, 3030, 3050, 3050z, 3052, 355 M1005mfp, Q2612A (Քենոն 303/703) HP 1320, Canon i-sensys LBP6300dn (Քենոն 719) Բրադեր TN720/TN750 կամ համարժեքը | 20 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում՝ ներառյալ թղթի տրման ռետինե լիսեռ (HP LJ, Canon LBP կամ համարժեքը) | 5 |
| Լազերային տպիչի պրոֆիլակտիկա | 5 |
| Վառարանի վերանորոգում՝ նեռառյալ պահեստամասեր | 5 |
| Լազերային բլոկի վերանորոգում՝ ներառյալ պահեստամասեր | 3 |
| Լազերային բլոկի փոխարինում՝ ներառյալ լազերային բլոկ | 3 |

**Ծառայությունները կմատուցվեն ըստ պատվիրատուի պահանջի***

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| մարտ | դեկտեմբեր |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ-02586282

Աշխատակազմի ղեկավար՝

_______________ Վ. Էլոյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Բնեռային ուղի» ՍՊԸ
ք. Երևան, Մանդյան 25 շ, բն 6.
«Արարատբանկ» ԲԲԸ Զարգացում մ/ճ.
h/h 1810052083823312
ՀՎՀՀ 02228306

Տնօրեն՝

_______________ Ա. Հակոբյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
2017թ. 3-ին կնքված
N ՍՊ-ՇՀԾՁԲ-15/9 - գնման պայմանագրի
102-2017

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. ՀՀ դրամ

| N | Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը | Ընդամենը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | | | 2-րդ եռամսյակ | | | 3-րդ եռամսյակ | | | 4-րդ եռամսյակ | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | 2 | 3 = (4:15) | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 2 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | 1058.4 | | | 105.8 | 370.5 | 370.5 | 370.5 | 635.0 | 635.0 | 635.0 | 1058.4 | 1058.4 | 1058.4 |
| 3 | **Ընդամենը** | 1058.4 | 0.0 | 0.0 | 105.8 | 370.5 | 370.5 | 370.5 | 635.0 | 635.0 | 635.0 | 1058.4 | 1058.4 | 1058.4 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Աբովյան 9

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011059186

ՀՎՀՀ - 02586282

Աշխատակազմի ղեկավար

Վ. Էլոյան

Ստորագրություն

Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Բևեռային ուղի» ՍՊԸ

ք. Երևան, Մանդալյան 25 շ. բն 6.

«Արարատբանկ» ԲԲԸ Զարգացում մ/ճ.
հ/հ 1610052083823312

ՀՎՀՀ 02228306

Տնօրեն

Ա. Հակոբյան

Ստորագրություն

Կ. Տ.

Հավելված 3
<<____>> ____________20 թ. կնքված
N ____________________ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Բսեռային ուղի» ՍՊԸ
ք. Երևան, Մանադյան 25 շ, բն 6.
«Արարատբանկ» ԲԲԸ
Զարգացում մ/ճ.

հ/հ 1810052083823312
ՀՎՀՀ 02228306

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ-02586282

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________________
________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս _______________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_______________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>> _____________20 թ. կնքված
N _____________________ ծածկագրով գնման պայմանագրի

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ -------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)

---------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------------

(Կատարողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| __________________<br>ազգանուն, անուն | __________________<br>ազգանուն, անուն |
| __________________<br>ստորագրություն | __________________<br>ստորագրություն |

## ԳՆԱՑՈՒՑԱԿ

| Ձեռքբերվող ծառայության նկարագիր | | | | |
|---|---|---|---|---|
| Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | **Համակարգչի պահպանման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր** | | | |
| | **Անվանումը** | **Քանակը** | **Միավորի գինը** | **Գումարը** |
| | Անձնական համակարգչի MB նորոգում | 8 | 3000 | 24000 |
| | Անձնական համակարգչի MB փոխարինում՝ ներառյալ Ասուս Ինտել 31 չիպսեթ, ՊՍԻ-Էքսպ (ASUS Intel 31 chipset, PCI-Exp) կամ համարժեքը | 3 | 30000 | 90000 |
| | Նոթբուկ համակարգչի MB նորոգում | 2 | 2400 | 4800 |
| | Նոթբուկ համակարգչի MB փոխարինում ներառյալ համապատասխան MB | 2 | 300 | 600 |
| | CPU փոխարինում՝ ներառյալ Քորե 2 Դուօ Ե7300 (2.66 ԳՀց), 1066 ՄՀց (Core 2 Duo E7300 (2.66G Hz), 1066 MHz) կամ համարժեքը | 2 | 300 | 600 |
| | Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ1 1024Մ 400ՄՀՑ (DDR1 1024M 400MHZ) կամ համարժեքը | 2 | 300 | 600 |
| | Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ) կամ համարժեքը | 5 | 18000 | 90000 |
| | Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ3 1024Մ 1333ՄՀՑ (DDR3 1024M 1333MHZ) կամ համարժեքը | 4 | 300 | 1200 |
| | Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1333ՄՀՑ (DDR3 2048M 1333MHZ) կամ համարժեքը | 5 | 15000 | 75000 |
| | Անձնական համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ3 4ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 4ԳԲ 1333MHZ) կամ համարժեքը | 3 | 300 | 900 |
| | Անձնական համակարգչի SVGA փոխարինում՝ ներառյալ Նվիդիա Ջիֆ ՋիՏի 1Գբ ՊիՍիԱյ -Էքսպ (Nvidia GF GT 1Gb PCI Exp) կամ համարժեքը | 3 | 300 | 900 |
| | Նոթբուկ համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ) կամ համարժեքը | 2 | 300 | 600 |
| | Նոթբուկ համակարգչի RAM փոխարինում՝ ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1333ՄՀՑ (DDR3 2048M 1333MHZ) կամ համարժեքը | 2 | 21000 | 42000 |
| | Անձնական համակարգչի HDD փոխարինում, ներառյալ ՀԴ 500 գբ ՍԱՏԱ, 7200 ռպմ (HDD 500 Gb SATA, 7200 rpm) կամ համարժեքը | 5 | 33000 | 165000 |
| | Նոթբուկ համակարգչի HDD փոխարինում՝ ներառյալ ՀԴ 500 գբ ՍԱՏԱ, 5400 ռպմ (HDD 500 Gb SATA, 5400 rpm) կամ համարժեք | 2 | 30000 | 60000 |
| | DVD-RW փոխարինում՝ ներառյալ ԴՎԴ-ՌՎ (DVD-RW) կամ համարժեքը | 4 | 4500 | 18000 |
| | Սնուցման բլոկի փոխարինում՝ ներառյալ սնուցման բլոկ Պ4 պատյանի համար 450 Վտ (Power supply unit for P4 Case 450w) կամ համարժեքը | 15 | 7800 | 117000 |
| | **Մոնիտորի պահպանման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր** | | | |
| | **Անվանումը** | **Քանակը** | **Միավորի գինը** | **Գումարը** |
| | ԼՍԴ-ի լամպի փոխարինում՝ ներառյալ լամպը 17" | 3 | 300 | 900 |
| | ԼՍԴ-ի լամպի փոխարինում՝ ներառյալ լամպը 19" | 3 | 300 | 900 |
| | ԼՍԴ-ի մոնիտորի լուսավորման համակարգի վերանորոգում՝ ներառյալ համապատասխան պահեստամասեր 17" | 3 | 7500 | 22500 |
| | ԼՍԴ-ի մոնիտորի լուսավորման համակարգի վերանորոգում՝ ներառյալ համապատասխան պահեստամասեր 19" | 3 | 300 | 900 |
| | **Անխափան սնուցող սարքի պահպանման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր** | | | |

| Անվանումը | Քանակը | Միավորի գինը | Գումարը |
|---|---|---|---|
| Մարտկոցի փոխարինում՝ ներառյալ մարտկոցը 12Վ/17Ա Ռելեների փոխարինում՝ ներառյալ ռելեներ | 15 | 9000 | 135000 |
| **Սկաների պահպանման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր** | | | |
| **Անվանումը** | **Քանակը** | **Միավորի գինը** | **Գումարը** |
| Սկաների պրոֆիլակտիկա | 3 | 300 | 900 |
| Վերանորոգում պահեստամասերով | 3 | 300 | 900 |
| Լամպի փոխարինում՝ ներառյալ լամպը Ա4 | 3 | 300 | 900 |
| **Համակարգչային ցանցի պահպանման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր** | | | |
| **Անվանումը** | **Քանակը** | **Միավորի գինը** | **Գումարը** |
| Սվիչի տեղադրում՝ ներառյալ սվիչ տեղադրում, ներառյալ սվիչ 10/100/1000 16 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 16 PORT) կամ համարժեքը Մալուխի անցկացում՝ ներառյալ մալուխի գինը (գծամետր) | 2 | 24000 | 48000 |
| **Լազերային տպիչի պահպանման և վերանորոգման ծառայության տեխնիկական բնութագիր** | | | |
| **Անվանումը** | **Քանակը** | **Միավորի գինը** | **Գումարը** |
| Լիցքավորում լազերային տպիչների՝ ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1100, 1012, 1015, 1018, 1020, 3015, 3020, 3030, 3050, 3050z, 3052, 355 M1005mfp, Q2612A (Քենոն 303/703) HP 1320, Canon i-sensys LBP6300dn (Քենոն 719) Բրոդեր TN720/TN750 կամ համարժեքը | 20 | 3000 | 60000 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում՝ ներառյալ թերմոթաղանթ (HP/Canon կամ համարժեքը) | 5 | 3000 | 15000 |
| Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման՝ ներառյալ թմբուկ ՀՊ ԼՋ 1100, 1012, 1015, 1018, 1020, 3015, 3020, 3030, 3050, 3050z, 3052, 355 M1005mfp, Q2612A (Քենոն 303/703) HP 1320, Canon i-sensys LBP6300dn (Քենոն 719) Բրադեր TN720/TN750 կամ համարժեքը | 20 | 900 | 18000 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում՝ ներառյալ թղթի տրման ռետինե լիսեռ (HP LJ, Canon LBP կամ համարժեքը) | 5 | 6000 | 30000 |
| Լազերային տպիչի պրոֆիլակտիկա | 5 | 6000 | 30000 |
| Վառարանի վերանորոգում՝ ներառյալ պահեստամասեր | 5 | 300 | 1500 |
| Լազերային բլոկի վերանորոգում՝ ներառյալ պահեստամասեր | 3 | 300 | 900 |
| Լազերային բլոկի փոխարինում՝ ներառյալ լազերային բլոկ | 3 | 300 | 900 |
| **Ընդամենը** | | | **1058400** |

*** Գնային առաջարկի (Հավելված 4-ի) հետ անհրաժեշտ է ներկայացնել ծառայության յուրաքանչյուր կետի արժեքի բացվածքը՝ առանձին գնացուցակով:**

<<Բևեռային ուղի>> ՍՊԸ տնօրեն Ամալյա Հակոբյան

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.